«Ցե-Քյու Արմենիա Գրոութ»
ներդրումային ֆոնդ

2022թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Զուտ ակտիվների մասին հաշվետվություն	5
Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն	9
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն	8

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են զուտ ակիվների մասին հաշվետվությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի զուտ ակտիվների մասին հաշվետվությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա Ֆոնդի արդյունքները և զուտ ակտիվների փոփոխությունները՝ Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ նշում

Ֆոնդի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2022թ. ապրիլի 29-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ֆոնդը լուծարելու կամ Ֆոնդի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի գլխավոր

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
28 ապրիլի 2023թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՀՀ դրամով	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Պարտատոմսեր ՀՀ դրամով		
ՀՀ պետական պարտատոմսեր	5,022,823,132.64	3,364,136,999.82
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	876,242,780.60	874,854,712.80
Պարտատոմսեր արտարժույթով		
ՀՀ պետական պարտատոմսեր ԱՄՆ դոլարով	177,289,368.36	-
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր ԱՄՆ դոլարով	-	172,464,805.33
Ֆոնդի փայեր (UCITS) արտարժույթով		
Ֆոնդի փայեր եվրոյով	647,049,922.50	843,563,590.23
Ֆոնդի փայեր ԱՄՆ դոլարով	2,849,970,562.88	2,183,868,215.69
Այլընտրանքային ներդրումային ֆոնդեր արտարժույթով		
Այլընտրանքային ներդրումային ֆոնդում մասնավոր բաժնեմասնակցություն, ԱՄՆ դոլարով	16,617,549.76	8,683,898.47
Ընդամենը	**9,589,993,316.74**	**7,447,572,222.34**
Կանխիկ	259,577,154.80	29,469,636.28
ՀՀ դրամ	125,837.37	140,666.22
Եվրո	4,112,531.00	4,843,753.15
ԱՄՆ դոլար		
Ավանդներ ՀՀ բանկերում	3,222,000,000.00	2,551,000,000.00
Ավանդներ ՀՀ դրամով		
Հաշվեգրված տոկոսներ	82,802,809.56	50,998,377.98
Հաշվեգրված տոկոսներ	**13,158,611,649.47**	**10,084,024,655.97**
Ընդամենը ակտիվներ		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(18,918,507.24)	(15,012,344.72)
Հաշվեգրումներ վճարների գծով	**(18,918,507.24)**	**(15,012,344.72)**
Ընդամենը պարտավորություններ		
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ	**13,139,693,142.23**	**10,069,012,311.25**

Հաստատվել է հրապարակման համար 2023թ. ապրիլի 28-ին:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

Իզաբելա Ադիլխանյան
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Զուտ ակտիվների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՀՀ դրամով	**2022թ.**	**2021թ.**
ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ		
Ֆոնդի սովորական արդյունք		
Եկամուտ (առանց փակման գնի)		
Այլ ֆոնդերում ներդրումներից եկամուտ	57,807,728.60	34,449,542.56
Մարման վճար	1,209,020.22	8,924.94
Տոկոսային եկամուտ	828,214,685.43	466,301,645.53
	887,231,434.25	**500,760,113.03**
Ծախսեր		
Կառավարման վճար	(127,567,605.05)	(83,318,709.85)
Շահութահարկ և այլ վճարներ	(1,320,688.92)	(1,107,847.32)
Արտաքին աուդիտի գծով ծախսեր	(6,300,000.00)	(5,000,000.00)
	(135,188,293.97)	**(89,426,557.17)**
Ֆոնդի սովորական արդյունք	**752,043,140.28**	**411,333,555.86**
Իրացված փակման գին		
Շահույթ դիվիդենտներից	260,648,650.96	67,571,629.66
Իրացված շահույթ	71,310,883.89	56,887,444.45
Իրացված վնաս	(157,448,440.83)	(88,792,923.59)
Իրացված փակման գին	**174,511,094.02**	**35,666,150.52**
Ֆոնդի իրացված արդյունք	**926,554,234.30**	**446,999,706.38**
ՉԻՐԱՑՎԱԾ ՓԱԿՄԱՆ ԳԻՆ		
Չիրացված փակման գնի փոփոխություն	**(1,815,740,427.09)**	**(274,691,345.32)**
ԵԿԱՄՏԻ ՃՇԳՐՏՈՒՄ		
Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա եկամտի գծով		
Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա՝ նախկինում առաջացած եկամտի գծով	-	-
	-	**-**
ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ	**(889,186,192.79)**	**172,308,361.06**

Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՀՀ դրամով		
Դաս A. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (4,398,429 փայ՝ 1 փայի համար 1,158.7577 ՀՀ դրամ արժեքով)		**5,096,713,505.41**
Դաս B. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (69,122 փայ՝ 1 փայի համար 1,155.2612 ՀՀ դրամ արժեքով)		**79,854,427.78**
ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**5,176,567,933.19**
Փայերի փոփոխություն		
Դաս A. Բաժանորդագրում (3,531,488 փայ)	4,113,000,000.00	
Դաս B. Բաժանորդագրում (522,933 փայ)	607,424,600.00	
Դաս A. Մարում (0 փայ)	(0.00)	
Դաս B. Մարում (258 փայ)	(288,583.00)	
Եկամտի համամասնորեն ճշգրտում	0.00	**4,720,136,017.00**
Ֆոնդի արդյունքը տարվա համար		**172,308,361.06**
Դաս A. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (7,929,917 փայ՝ 1 փայի համար 1,181.9747 ՀՀ դրամ արժեքով)		**9,372,961,931.16**
Դաս B. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (591,797 փայ՝ 1 փայի համար 1,176.1640 ՀՀ դրամ արժեքով)		**696,050,380.09**
ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**10,069,012,311.25**
Փայերի փոփոխություն		
Դաս A. Բաժանորդագրում (3,605,306 փայ)	4,016,999,999.97	
Դաս B. Բաժանորդագրում n (2,888 փայ)	3,318,009.00	
Դաս A. Մարում (0 փայ)	(0.00)	
Դաս B. Մարում (55,994 փայ)	(60,450,985.20)	
Եկամտի համամասնորեն ճշգրտում	0.00	**3,959,867,023.77**
Ֆոնդի արդյունքը տարվա համար		**(889,186,192.79)**
Դաս A. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (11,535,223 փայ՝ 1 փայի համար 1,088.6084 ՀՀ դրամ արժեքով)		**12,557,340,928.01**
Դաս B. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (538,691 փայ՝ 1 փայի համար 1,081.0502 ՀՀ դրամ արժեքով)		**582,352,214.22**
ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**13,139,693,142.23**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

1. Ֆոնդը

«Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդը («Ֆոնդը») հիմնադրվել է 2014թ. հունվարի 1-ին և սկսել է գործունեությունը 2014թ. մարտի 11-ին: Ֆոնդի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) (Վիեննա, Ավստրիա) (74.9%) և գերմանական «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» (Ampega Asset Management GmbH) (Քյոլն, Գերմանիա) (25.1%)՝ «Տալանքս ԱԳ Գրուփի» (Talanx AG Group) անդամ ընկերության համատեղ ձեռնարկությունն է: «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերությունը (C-QUADRAT Investment AG) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: Ընկերությունը հիմնադրվել է 1991թ-ին և 2006թ-ից ցուցակված է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008թ. մայիսից՝ նաև Վիեննայի ֆոնդային բորսայում: «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» (Ampega Asset Management) ընկերությունը՝ «Ամպեգա Ինվեսթմենթ» (Ampega Investment) և «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների հետ համատեղ, ձևավորում է Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների գծով սեգմենտը:

Ֆոնդը հրապարակային, բաց, ստանդարտ, պայմանագրային ներդրումային ֆոնդ է: Այն ունի դիվերսիֆիկացված ներդրումային պորտֆել: Ֆոնդի ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքն է ապահովել իր ակտիվների արժեքի երկարաժամկետ աճ՝ իր ակտիվների մինչև 25%-ը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային արժեթղթերում ներդրումների ֆոնդերում և համարժեք այլ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են ֆինանսական գործիքներում:

Ֆոնդի ակտիվները հանդիսանում են Ֆոնդի մասնակիցների, այլ ոչ՝ Ֆոնդի կառավարչի սեփականությունը: Ֆոնդն ունի իր ակտիվների կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժույթով ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40%-ը:

Ֆոնդը թողարկում է երկու դասի փայ՝

1) A դաս՝ նախատեսված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից լիցենզավորված կառավարիչ ունեցող ներդրումային ֆոնդերի, ինչպես նաև օտարերկրյա կարգավորող մարմնի կողմից գրանցված և լիցենզավորված կառավարիչ ունեցող օտարերկրյա ներդրումային ֆոնդերի համար,
2) B դաս՝ նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող ներդրողների համար:

Ֆոնդում նվազագույն սկզբնական ներդրման չափը կազմում է 250 մլն ՀՀ դրամ՝ A դասի փայ ձեռք բերողների համար, 3 մլն ՀՀ դրամ և 100 համար ՀՀ դրամ B դասի փայ ձեռք բերող համապատասխանաբար իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող ներդրողների համար:

Ֆոնդի փայերը որևէ կարգավորվող շուկայում ցուցակված չեն:

Փայերն իրավունք չեն տալիս դրանց տիրապետողներին կայացնել որոշումներ Ֆոնդի կառավարման վերաբերյալ: Մասնակիցները քվեարկության իրավունք չունեն:

Ֆոնդի գործունեությունը կարող է դադարեցվել Կառավարչի կամ Պահառուի կողմից՝ համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի և միմիայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից նախապես տրված համաձայնության առկայության դեպքում:

Ընդհանուր տեղեկություններ

Ֆոնդի կառավարիչ	«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37 ՀՀ կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013թ. Կառավարվող այլ ֆոնդեր՝ «Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային ֆոնդ» «Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ» «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ» Բաժնետիրական կառուցվածք՝ 74,9 % «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերություն 25,1% «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» Ընկերության ղեկավարությունը՝ Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն) Իզաբելա Աղիլխանյան (Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն) Ամբողջությամբ վճարված կապիտալ՝ 650,000 հազար ՀՀ դրամ
Դիտորդ խորհուրդ	Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ) Անդրեաս Վիմմեր Յոհաննես Կերխեր Կառլոս Մենդեզ դե Վիգո
Ֆոնդի ակտիվների պահառու և ռեեստրավար	«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն (մասնակիցների փայերի պահառու և ռեեստրավար), իրավաբանական և գլխամասային գրասենյակի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, 5-րդ հարկ, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն
Ֆոնդի բանկ	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, իրավաբանական և և գլխամասային գրասենյակի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան 66
Ֆոնդի աղմինիստրատոր	«Ռայֆազն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ», հասցե՝ Ավստրիա, ք. Վիեննա, Ամ Ստադթպարկ 9
Աուդիտոր	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք հաշվետու ամսաթվի դրությամբ (%):

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան: Հաշվետու ժամանակաշրջանը 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարին է:

Փայերի թողարկում և մարում. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով և իրենից ներկայացնում է ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքի և ֆոնդի ընդհանուր պարտավորությունների տարբերությունը: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև փայի մարման ու թողարկման գները հաշվարկվում են յուրաքանչյուր աշխատանքային օր և հրապարակվում են Կառավարչի կողմից պաշտոնական կայքէջում: Փայերը թողարկվում և մարվում են թողարկման/մարման հայտ ստանալու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 15:00-ի դրությամբ Ռեեստրավարի Համակարգում առկա փայի թողարկման/մարման գնով: Փայերի թողարկման համար վճար կամ միջնորդավճար չի գանձվում: Մարման վճարները սահմանվում են Ֆոնդի կանոններով և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ և կազմում են 0-2%՝ կախված ամսական մարման պահանջի մեծությունից և սկզբնական ներդրման ժամկետից: Թողարկման և մարման վճարները, ինչպես նաև թողարկման և մարման հետ կապված մյուս բոլոր ծախսերը, իրականացվում են մասնակցի հաշվին: Մարման վճարը ստացողը Ֆոնդն է:

Ակտիվների պահառության, ռեեստրավարման և Ֆոնդի բանկային ծառայությունների վճարներ. Ֆոնդի բանկի կողմից միջնորդավճարներ չեն գանձվում: Ռեեստրավարի պարգևավճարների դրույքաչափը սահմանվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տարեկան 0.15%-ի չափով հաշվարկված օրական կտրվածքով: Պահառուի և ռեեստրավարի վճարները վճարում է Ֆոնդի կառավարիչը:

Ֆոնդի կանոնները. Ֆոնդի կանոնները, պարբերական հաշվետվությունները, փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկատվությունը, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկատվությունը տեղադրված է և հասանելի է Ֆոնդի կառավարչի պաշտոնական կայքէջում՝ https://www.c-quadrat-ampega.am: Մասնակիցները քվեարկելու իրավունք չունեն: Ֆոնդի փայերը ցուցակված չեն որևէ ֆոնդային բորսայում:

Ֆինանսական գործիքների գնահատման կանոնները. արժեթղթերը զուտ ակտիվների մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը կամ շուկայի բացակայության դեպքում՝ արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Վերը նշված եղանակով որոշված արժեթղթերի ներկա արժեքի և դրանց սկզբնական միջին կշռված արժեքի միջև տարբերությունը ֆոնդի արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես չիրացված փակման գնի փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են վերը նշված եղանակով և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Ավանդներ. զվանդները գնահատվում են գծային մեթոդով:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր. զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման դրությամբ վերջին հասանելի առկա գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օր հրապարակվող շուկայական դրույքաչափերը:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր. կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ամենօրյա կտրվածքով հրապարակվող եկամտաբերության կորի հիման վրա:

Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS). UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին գնանշված արժեքով:

Հարկում. ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ֆոնդն իր ակտիվների հաշվին վճարում է շահութահարկ՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.01%-ի չափով հաշվարկվող օրական կտրվածքով:

Կառավարման վճարներ. կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա և ճանաչվում են Ֆոնդի իրացված արդյունքում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են Ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ՝ աուդիտի վճարի, շահութահարկի և Ֆոնդի գործարքների հետ ուղղակիորեն կապված ծախսերի: Կառավարման տարեկան վճարը հաշվարկվում է օրական 1.1%-ի չափով A դասի համար, և 1.3%-ի չափով B դասի համար, ներառյալ՝ բոլոր կիրառելի հարկերը, և ենթակա է վճարման մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

UCITS-ի կողմից գանձվող կառավարման վճարների առավելագույն մասնաբաժինը կազմում է նրանց զուտ ակտիվների արժեքի 0.15%-2.00%-ը:

Բաշխումներ մասնակիցներին. Ֆոնդի եկամուտը չի բաշխվելու մասնակիցներին, այլ վերստին ներդրվելու է Ֆոնդում: Մասնակիցները կարող են ստանալ Ֆոնդի եկամտի իրենց մասնաբաժինը միմիայն փայերի մարման միջոցով:

Կառավարչի կողմից վճարվող վարձատրության քաղաքականությունը. 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում Կառավարչի կողմից իր աշխատակիցներին վճարված աշխատավարձերի ընդհանուր գումարը կազմում է 346,870 հազար ՀՀ դրամ (2021թ-ին՝ 238,558 հազար ՀՀ դրամ), որից 184,535 հազար ՀՀ դրամը (2021թ-ին՝ 177,103 հազար ՀՀ դրամը) ներկայացնում է ղեկավարության վարձատրությունը: Ֆոնդը աշխատակիցներ չունի: Ֆոնդի կողմից որևէ ուղղակի վճարում աշխատավարձերի գծով չի կատարվում: Կառավարչի կողմից հաշվարկվող վարձատրությունը հիմնված է աշխատավարձերի՝ հաստատագրված դրույքաչափերով քաղաքականության վրա և ուղղակիորեն կախված չէ Ֆոնդի արդյունքներից: Հաշվետու տարում Կառավարչի՝ վարձատրությանն առնչվող քաղաքականության էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Գործարար միջավայր. Ֆոնդի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Գործառնական ռիսկ. գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, խարդախությունից կամ արտաքին իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի գործում ըստ պատշաճի, գործառնական ռիսկերը կարող են վնասել Ֆոնդի հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգային հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Ֆոնդը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ձեռնարկում է քայլեր դրանք կառավարելու համար՝ վերահսկողական հայեցակարգի և հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Ֆոնդի գործունեությունը նախորդ ֆինանսական տարում

Ակտիվների տեղաբաշխման 2022թ. մարտավարական որոշումներ

2022թ. առաջին կիսամյակում միջազգային ֆինանսական շուկաներում գների կտրուկ անկումը հանգեցրեց օտարերկրյա պարտքային և բաժնային գործիքների, ինչպես նաև՝ արտարժութային դիրքերի կրճատմանը: 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում Ֆոնդը որոշում կայացրեց չվերաբալանսավորել վերոնշյալ թերկշռված ակտիվների դասերը: Մարտավարական նման որոշումների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել հավելյալ չիրացված վնասից:

2022թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Ֆոնդը վերականգնեց արտասահման արտասահմանյան պարտքային և բաժնային արժեթղթերի կշիռները, ինչպես նաև արտարժույթային դիրքերը:

Տեղական շուկայում բանկային ավանդների և բանկերի կողմից թողարկված պարտատոմսերի՝ պետական պարտատոմսերի հետ համեմատած ցածր եկամտաբերության պայմաններում՝ մարտավարական որոշում կայացվեց թերկշռել բանկային ավանդները և բանկերի կողմից թողարկված պարտատոմսերը՝ ի համեմատ պետական պարտատոմսերի:

Համադրելի տեղեկատվություն

Ֆոնդի արդյունքների և զուտ ակտիվների մասին հաշվետվությունների ներկայացման փոփոխություն

2022թ. ընթացքում Ֆոնդը փոփոխել է զուտ ակտիվների ներկայացումը՝ Ֆոնդի զուտ ակտիվների ավելի մանրամասն արտացոլումն ապահովելու համար: Համադրելի տվյալները վերադասակարգվել են հետևողականություն ապահովելու համար: Գումարների ճշգրտումներ չեն կատարվել:

2022թ. ընթացքում Ֆոնդը փոփոխել է Ֆոնդի սովորական արդյունքի եկամտի (առանց փակման գնի) և իրացված փակման գնի դասակարգումը՝ ընդունված լավագույն պրակտիկայի հետ ներկայացման համապատասխանությունն ապահովելու համար: Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվության համադրելի տվյալները վերադասակարգվել են հետևողականություն ապահովելու համար՝ հետևյալ կերպ.

Եկամուտ (առանց փակման գնի)	**Ըստ 2021թ. հաշվետվության**	**Վերադասակարգում**	**Ներկայացված 2021թ. համար**
Այլ ֆոնդերում ներդրումներից եկամուտ	-	34,449,542.56	34,449,542.56
Մարման վճար	-	8,924.94	8,924.94
Տոկոսային եկամուտ	500,760,113.03	(34,458,467.5)	466,301,645.53
Ընդամենը	**500,760,113.03**	**-**	**500,760,113.03**

Իրացված փակման գին	**Ըստ 2021թ. հաշվետվության**	**Վերադասակարգում**	**Ներկայացված 2021թ. համար**
Շահույթ դիվիդենտներից	-	67,571,629.66	67,571,629.66
Իրացված շահույթ	-	56,887,444.45	56,887,444.45
Իրացված վնաս	-	(88,792,923.59)	(88,792,923.59)
Իրացված օգուտ	50,122,778.26	(50,122,778.26)	-
Գործարքի միջնորդավճարներ	(116,334.70)	116,334.70	-
Արտարժութային տատանումների ազդեցությունը բանկային հաշիվների վրա	(14,340,293.04)	14,340,293.04	-
Ընդամենը	**35,666,150.52**	**-**	**35,666,150.52**

2. Ֆոնդի վերաբերյալ ամփոփ տվյալներ վերջին երեք տարիների համար

Ամսաթիվ	Արժույթ	Զուտ ակտիվների արժեքը Ընդամենը	Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով	Բաշխում Ընդամենը	Բաշխում ըստ փայի
31 դեկտեմբերի 2022թ.	ՀՀ դրամ	13,139,693,142.23	A դաս 1,088.6084 B դաս 1,081.0502	-	-
31 դեկտեմբերի 2021թ.	ՀՀ դրամ	10,069,012,311.25	A դաս 1,181.9747 B դաս 1,176.1640	-	-
31 դեկտեմբերի 2020թ.	ՀՀ դրամ	5,176,567,933.19	A դաս 1,158.7577 B դաս 1,155.2612	-	-

3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կազմում

Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով	A դաս 1,158.7577 B դաս 1,155.2612
Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2020թ. հունվարի 1-ից 2020թ.դեկտեմբերի 31-ն ընկած տարվա համար, ՀՀ դրամով	A դաս 129.1771 Դաս B 126.7739
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	**A դաս 12.55%** **B դաս 12.33%**
Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով	A դաս 1,181.9747 B դաս 1,176.1640
Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2021թ. հունվարի 1-ից 2021թ.դեկտեմբերի 31-ն ընկած տարվա համար, ՀՀ դրամով	A դաս 23.2170 B դաս 20.9028
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	A դաս 2.00% B դաս 1.81%
Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով	A դաս 1,088.6084 B դաս 1,081.0502
Զուտ նվազում փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով	A դաս (93.3663) B դաս (95.1138)
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	**A դաս (7.90)%** **B դաս (8.09)%**
Մեկ փայի դիմաց զուտ եկամուտը՝ ՀՀ դրամով, սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից	**A դաս 88.6084** **B դաս 81.0502**
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	**A դաս 8.86%** **B դաս 8.11%**

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը*	Արժույթը	Քանակ	Ձեռք բերված քանակ	Վաճառված քանակ	Շուկայական արժեքը արժույթով (կլորացված)	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Հայաստանի Հանրապետություն								
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր								
AMGB1029A250	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25	ՀՀ դրամ	135,000,000	-	-	99.68	134,564,465.97	1.02%
AMGB1029A276	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27	ՀՀ դրամ	250,000,000	-	-	94.60	236,501,637.00	1.80%
AMGB1029A292	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29	ՀՀ դրամ	587,000,000	-	-	87.83	515,585,571.78	3.92%
AMGB20172327	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32	ՀՀ դրամ	320,000,000	-	-	110.23	352,736,970.88	2.68%
AMGB2029A366	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36	ՀՀ դրամ	280,000,000	-	-	108.83	304,732,868.44	2.32%
AMGB2029A374	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37	ՀՀ դրամ	292,000,000	-	-	105.49	308,042,192.96	2.34%
AMGB3129A504	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50	ՀՀ դրամ	220,000,000	100,000,000	-	83.54	183,796,626.64	1.40%
AMGN60294250	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25	ՀՀ դրամ	490,000,000	390,000,000	-	91.47	448,191,083.20	3.41%
AMGB1129A316	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31	ՀՀ դրամ	1,164,400,000	790,000,000	-	79.95	930,934,383.65	7.08%
AMGN60294268	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/26	ՀՀ դրամ	390,000,000	-	-	87.91	342,862,506.48	2.61%
AMGN36294244	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/24	ՀՀ դրամ	70,000,000	-	-	94.77	66,336,573.31	0.50%
AMGB30163472	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47	ՀՀ դրամ	257,000,000	-	-	111.49	286,539,511.12	2.18%
AMGN36294251	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/25	ՀՀ դրամ	336,000,000	336,000,000	-	96.31	323,594,479.15	2.46%
AMGN60294276	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/27	ՀՀ դրամ	632,000,000	632,000,000	-	93.10	588,404,262.06	4.48%
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր								
AMASHBB2DER6	Արդշինբանկ 20/23	ՀՀ դրամ	25,200	-	-	10,069.46	253,750,323.96	1.93%
AMHEZBB28ER3	Հայէկոնոմբանկ 20/23	ՀՀ դրամ	5,000	-	-	10,261.42	51,307,103.50	0.39%
AMAMRBB2UER4	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23	ՀՀ դրամ	512	-	-	101,714.28	52,077,708.80	0.40%
AMNMCCB2LER4	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 21/24	ՀՀ դրամ	3,400	-	-	10,082.10	34,279,128.44	0.26%
AMAMRBBM2ER1	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23	ՀՀ դրամ	500	-	-	101,860.40	50,930,198.50	0.39%
AMASHBB2HER7	Արդշինբանկ 21/23	ՀՀ դրամ	1,270	-	-	102,704.36	130,434,537.20	0.99%
AMCOVSB2CER3	Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 21/24	ՀՀ դրամ	1,400	-	-	50,577.98	70,809,165.00	0.54%
AMNMCCB2MER2	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 22/25	ՀՀ դրամ	5,000	5,000	-	10,009.91	50,049,540.00	0.38%
AMNMCCB2NER0	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 22/25	ՀՀ դրամ	18,000	18,000	-	10,144.73	182,605,075.20	1.39%
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ եվրոպարտատոմսեր								
XS1207654853	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 REGS	ԱՄՆ դոլար	282,000	282,000	-	100.95	112,043,333.76	0.85%
XS2010043904	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 REGS	ԱՄՆ դոլար	200,000	200,000	-	82.89	65,246,034.60	0.50%
Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր							**6,076,355,281.60**	**46.24%**

Օտարերկրա ներդրումներ								
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
LU1215461085	UBSLFS-BBMSCIUSLCS ADDL	ԱՄՆ դոլար	36,000	36,000	-	14.78	209,410,725.59	1.59%
IE00BKKKWJ26	ISH2-DL C.BD U. DL ACC.	ԱՄՆ դոլար	274,500	126,500	-	4.45	480,528,720.81	3.66%
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
AT0000A12G92	I-AM GR.ST.OPP. (VTA)	Եվրո	60,000	20,000	-	15.82	398,720,952.00	3.03%
IE00BYVJRP78	ISHSIV-SUS.M.EM.MK.SRI DL	ԱՄՆ դոլար	18,000	18,000	-	6.85	48,527,181.00	0.37%
IE00BYVJRR92	ISIV-MSCIUSASRI U.ETF DLA	ԱՄՆ դոլար	132,650	21,400	-	11.43	596,726,701.50	4.54%
IE00BYX8XC17	ISHSIV-MSCI JAPAN SRI DL	ԱՄՆ դոլար	52,500	52,500	-	6.01	124,098,524.55	0.94%
LU0629460089	UBSLFS-MSCI USA SR ADDL	ԱՄՆ դոլար	6,830	6,830	-	152.80	410,739,097.67	3.13%
LU0950674332	UBSLFS-MSCI WLD.SR AADL	ԱՄՆ դոլար	50,800	50,800	-	22.10	441,853,167.59	3.36%
IE00BDZZTM54	ISHSIV-MSCI WLD.SRI U.DLD	ԱՄՆ դոլար	197,500	197,500	-	6.92	538,086,444.17	4.10%
IE00B52VJ196	ISHSII-MSCI EUR.SRI EOACC	Եվրո	10,700	9,550	-	55.25	248,328,970.50	1.89%
Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**3,497,020,485.38**	**26.61%**
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Ներդրումներ բաժնային գործիքներում								
	Amber Capital Private Equity Fund**	ԱՄՆ դոլար	48,220	30,134	-	0.88	16,617,549.76	0.13%
Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**16,617,549.76**	**0.13%**
Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**3,513,638,035.14**	**26.74%**
Դրամական միջոցներ		**ՀՀ դրամ**					**263,815,523.17**	**2.01%**
Ավանդներ ՀՀ բանկերում		**ՀՀ դրամ**					**3,222,000,000.00**	**24,52%**
Հաշվեգրումներ և հետաձգումներ								
Տոկոսի հաշվեգրումներ		ՀՀ դրամ					82,802,809.56	0.63%
Վճարների հաշվեգրումներ		ՀՀ դրամ					(18,918,507.24)	(0.14%)
Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ							**63,884,302.32**	**0.49%**
Ընդամենը զուտ ակտիվների արժեքը							**13,139,693,142.23**	**100%**
Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ						ՀՀ դրամ	Ա դաս 1,088.6084 Բ դաս 1,081.0502	
Չմարված փայեր						**Հատ**	Ա դաս 11,535,223 Բ դաս 538,691	

* Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին:

** Այս բաժնային գործիքում ընդհանուր ներդրումները կազմում են 250,000.00 ԱՄՆ դոլար:

Զուտ ակտիվների արժեքի կազմը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը*	Արժույթը	Քանակ	Ձեռք բերված քանակ	Վաճառված քանակ	Շուկայական արժեքը արժույթով (կլորացված)	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Հայաստանի Հանրապետություն								
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր								
AMGB1029A250	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25	ՀՀ դրամ	135,000,000	-	-	105.70	142,689,021.26	1.42%
AMGB1029A276	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27	ՀՀ դրամ	250,000,000	50,000,000	-	102.11	255,280,346.25	2.54%
AMGB1029A292	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29	ՀՀ դրամ	587,000,000	-	-	96.33	565,481,068.38	5.62%
AMGB1129A316	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31	ՀՀ դրամ	374,400,000	374,400,000	-	88.91	332,864,169.21	3.31%
AMGB20172327	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32	ՀՀ դրամ	320,000,000	125,000,000	-	123.42	394,937,051.52	3.92%
AMGB2029A366	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36	ՀՀ դրամ	280,000,000	30,000,000	-	124.70	349,152,050.52	3.47%
AMGB2029A374	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37	ՀՀ դրամ	292,000,000	263,000,000	-	121.30	354,199,219.59	3.52%
AMGB30163472	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47	ՀՀ դրամ	257,000,000	257,000,000	-	130.26	334,779,398.26	3.32%
AMGB3129A504	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50	ՀՀ դրամ	120,000,000	60,000,000	-	98.44	118,130,883.60	1.17%
AMGN36294244	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/24	ՀՀ դրամ	70,000,000	70,000,000	-	94.89	66,424,030.54	0.66%
AMGN60294250	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25	ՀՀ դրամ	100,000,000	-	-	93.64	93,640,485.80	0.93%
AMGN60294268	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/26	ՀՀ դրամ	390,000,000	390,000,000	-	91.43	356,559,274.89	3.54%
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր								
AMAMRBB2NER9	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 20/22	ՀՀ դրամ	1,000	-	-	102,245.00	102,245,000.00	1.01%
AMAMRBB2UER4	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23	ՀՀ դրամ	512	512	-	101,631.67	52,035,415.04	0.52%
AMAMRBBM2ER1	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23	ՀՀ դրամ	500	500	-	101,566.69	50,783,345.75	0.50%
AMASHBB2AER2	Արդշինբանկ ՓԲԸ 20/22	ՀՀ դրամ	2,520	-	-	102.40	123,899,892.69	1.23%
AMASHBB2DER6	Արդշինբանկ 20/23	ՀՀ դրամ	25,200	-	-	10,102.39	254,580,113.34	2.53%
AMASHBB2HER7	Արդշինբանկ ՓԲԸ 21/23	ՀՀ դրամ	1,270	1,270	-	102,180.26	129,768,923.85	1.29%
AMCOVSB2CER3	Կոնվերս բանկ ՓԲԸ պարտատոմս 21/24	ՀՀ դրամ	1,400	1,400	-	50,641.07	70,897,499.40	0.70%
AMFNCAB26ER3	ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22	ՀՀ դրամ	5,000	-	-	10,276.75	51,383,759.25	0.51%
AMHEZBB28ER3	Հայէկոնոմբանկ 20/23	ՀՀ դրամ	5,000	-	-	10,266.28	51,331,395.25	0.51%
AMNMCCB2LER4	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 21/24	ՀՀ դրամ	3,400	3,400	-	10,270.31	34,919,037.17	0.35%
AMZPXKB21ER2	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22	ԱՄՆ դոլար	1,000	-	-	101.15	48,564,912.64	0.48%
AMZPXKB22ER0	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22	ՀՀ դրամ	750	-	-	102,546.97	76,910,223.75	0.76%
Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր							**4,411,456,517.95**	**43.81%**

Օտարերկրա ներդրումներ								
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
IE00B7J7TB45	IS GBL CORP BD U.ETF DLD	ԱՄՆ դոլար	4,900	4,900	-	103.57	243,655,925.59	2.42%
IE00BKKKWJ26	ISH2-DL C.BD U. DL ACC.	ԱՄՆ դոլար	148,000	148,000	-	5.23	371,597,823.10	3.69%
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
AT0000A12G92	C-QUADR.GR.ST.ESG(VTA)	Եվրո	40,000	18,000	-	19.59	425,189,196.00	4.22%
IE00B0M62Q58	ISHS-MSCI WORLD DL D	ԱՄՆ դոլար	5,960	5,960	-	68.65	196,436,893.39	1.95%
IE00B52VJ196	ISHSII-MSCI EUR.SRI EOACC	Եվրո	1,150	1,150	-	65.14	40,647,457.71	0.40%
IE00B5BMR087	ISHSVII-CORE S+P500 DLACC	ԱՄՆ դոլար	1,295	470	290	487.33	303,012,680.93	3.01%
IE00BJ0KDQ92	X(IE)-MSCI WORLD 1C	ԱՄՆ դոլար	3,700	820	-	97.79	173,725,695.22	1.73%
IE00BJ0KDQ92	X(IE)-MSCI WORLD 1C	Եվրո	1,700	820	-	86.71	79,980,822.52	0.79%
IE00BYVJRR92	ISIV-MSCIUSASRI U.ETF DLA	ԱՄՆ դոլար	111,250	111,250	-	14.06	750,755,906.63	7.46%
LU0274211217	XTR.EURO STOXX 50 1D	Եվրո	8,400	8,400	-	45.71	208,319,916.42	2.07%
LU0360482987	MSI-GLOBAL BRANDS Z DL	ԱՄՆ դոլար	1,530	1,530	5,100	108.73	79,874,601.97	0.79%
LU0839027447	XTR.NIKKEI 225 1D	Եվրո	7,150	5,600	3,250	23.05	89,426,197.58	0.89%
LU1223082279	SCHROD.ISF-GL.GOLD CACCDL	ԱՄՆ դոլար	1,090	530	950	123.83	64,808,688.86	0.64%
Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**3,027,431,805.92**	**30.06%**
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
	Amber Capital Private Equity Fund	ԱՄՆ դոլար	18,086	530	-	1.00	8,683,898.47	0.09%
Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**8,683,898.47**	**0.09%**
Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)							**3,036,115,704.39**	**30.15%**
Դրամական միջոցներ		**ՀՀ դրամ**					**34,454,055.65**	**0.34%**
Ավանդներ ՀՀ բանկերում		**ՀՀ դրամ**					**2,551,000,000.00**	**25.34%**
Հաշվեգրումներ և հետաձգումներ								
Տոկոսի հաշվեգրումներ		ՀՀ դրամ					50,998,377.98	0.51%
Վճարների հաշվեգրումներ		ՀՀ դրամ					(15,012,344.72)	(0.15%)
Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ							**35,986,033.26**	**0.36%**
Ընդամենը զուտ ակտիվների արժեքը							**10,069,012,311.25**	**100%**
Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ						**ՀՀ դրամ**	Ա դաս 1,181.9747 Բ դաս1,176.1640	
Չմարված փայեր						**Հատ**	Ա դաս 7,929,917 Բ դաս 591,797	

* Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին: